

05/12/2002

համար 396

«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՏՐԱՍԱԴԻՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

### **Ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալի, խորհրդի աշխատակազմին՝ սույն որոշման ընդունման պահից եռամսյա ժամկետում կազմակերպել սույն որոշմամբ հաստատված նորմատիվ ակտի անգլերեն և ռուսերեն պաշտոնական թարգմանությունն ու հրատարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2003 թվականի հունվարի 3-ից:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**

**S. Սարգսյան**

2002 թ. դեկտեմբերի 12  
Երևան

Հավելված

Հաստատված է  
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի  
2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 396 Ն որոշմամբ

## Կ Ա Ր Գ

### ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

#### ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանված է համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և կարգավորում է վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների (այսուհետև՝ սպառողական վարկ) տրամադրման կարգն ու պայմանները:

2. Վարկային կազմակերպությունները սպառողական վարկերը տրամադրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և սույն կարգով սահմանված կարգով ու պայմաններով:

3. Վարկային կազմակերպությունը, համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, առնվազն եռամսյակը մեկ, նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող մամուլում պետք է հրատարակի իր կողմից տրամադրվող սպառողական վարկերի վերաբերյալ տեղեկություններ, որտեղ պետք է նշված լինեն սպառողական վարկերի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները, տոկոսադրույքները, պահանջվող ապահովության միջոցները, ինչպես նաև տրամադրվող սպառողական վարկերի վերաբերյալ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

#### ԳԼՈՒԽ II. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Վարկային կազմակերպությունը փոխառուին կամ վարկառուին կարող է սպառողական վարկ տրամադրել, եթե փոխառուն կամ վարկառուն համապատասխանում է սույն կարգի 5-րդ կետով և սույն կարգի հիման վրա ընդունված՝ վարկային կազմակերպության ներքին ակտերով սահմանված վարկունակության չափանիշներին:

5. Վարկունակության չափանիշներ են՝

ա) սպառողական վարկի մարման համար փոխառուի կամ վարկառուի բավարար եկամտի աղբյուրը,

բ) փոխառուի կամ վարկառուի բավարար հեռանկարային իրացվելիությունը, այդ թվում՝ սպառողական վարկի սպասարկման ընթացքում բավարար դրամական միջոցների առկայությունը,

գ) պարտավորության կատարման ապահովման միջոցների առկայությունը,

- դ) փոխառուի կամ վարկառուի իրավունակությունը կամ գործունակությունը:

6. Վարկային կազմակերպությունն իր հայեցողությամբ կարող է սահմանել լրացուցիչ վարկունակության չափանիշներ. վարկառուի օրինավոր վարկային պատմությունը, բարոյական հատկանիշները, բարի համբավը և այլն:

7. Վարկային կազմակերպության մասնակիցների համար կարող են սահմանվել վարկավորման այլ պայմաններ, քան սահմանված են վարկային կազմակերպության մասնակից չհանդիսացող անձանց համար:

#### ԳԼՈՒԽ III. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Վարկային կազմակերպությունն իր ներքին ակտերով պետք է սահմանի իր կողմից տրամադրվող սպառողական վարկերի տրամադրման ընթացակարգը, որը պետք է համապատասխանի սույն կարգի դրույթներին:

9. Վարկային կազմակերպությունները կարող են սպառողական վարկեր տրամադրել՝ պահպանելով վարկավորման հետևյալ փուլերը.

ա) նախապատրաստման փուլը, որը ներառում է վարկային հայտի ընդունումը, վարկառուի վարկունակության գնահատումը, սպառողական վարկի գումարի տրամադրման նախապայմանների բավարարման ստուգումը,

բ) սպառողական վարկի տրամադրման փուլը,

գ) սպառողական վարկի վերահսկման փուլը, որն ընդգրկում է վճարումների և հետագա մարումների գրանցում, պարտավորությունների կատարման ապահովմանը վերաբերող փաստաթղթերի ու գրառումների վարում, վարկառուի մասին ֆինանսական և այլ տեղեկատվության ստացում, մշտական կապի պահպանում վարկառուի հետ, պայմանագրով նախատեսված լինելու դեպքում՝ պարբերաբար այցելություններ վարկառուին և այլն,

դ) սպառողական վարկի մարման փուլը:

10. Յուրաքանչյուր փոխառուի կամ վարկառուի համար վարկային կազմակերպությունը բացում և վարում է վարկային գործ: Վարկային գործի կազմի մեջ է մտնում վարկային փաստաթղթերի փաթեթը:

11. Վարկային կազմակերպությունը պետք է ունենա փոխառության կամ վարկային փաստաթղթերի օրինակելի ձևեր:

12. Վարկային փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

ա) վարկային հայտը,

բ) սպառողական վարկի կամ փոխառության պայմանագիրը՝ կազմված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 878-րդ կամ 888-րդ հոդվածների պահանջների համաձայն,

գ) փոխառուի կամ վարկառուի և նրա կոնտրագենտի միջև կնքվելիք կամ արդեն իսկ կնքված գործարքի (առուվաճառք, մատակարարում, կապալ կամ այլ գործարք) առկայությունը հավաստող փաստաթուղթը, եթե նման գործարք կնքվել է կամ կնքվելու է,

դ) փոխառուի կամ վարկառուի՝ սույն կարգի 5-րդ կետով և սույն կարգի հիման վրա ընդունված՝ վարկային կազմակերպության ներքին ակտերով սահմանված վարկունակության չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր:

#### **ԳԼՈՒԽ IV. ՍՈՒՅՆ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՍԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

13. Սույն կարգի դրույթները խախտելու համար վարկային կազմակերպությունները պատասխանատվություն են կրում «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխով սահմանված կարգով: